ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԻ ԽՈՒՄԲ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԵՒ ԹԵՐԹԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐԵՐԻ

Սեպտեմբերի 23-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եգիպտոսի Արաբական Հանրապետության մի խումբ մտավորականների եւ թերթերի գլխավոր խմբագրերի՝ ուղեկցությամբ Եգիպտոսի Հայ դատի հանձնախմբի ներկայացուցիչ Արմեն Մազլումյանի:

Հանդիպման սկզբում պարոն Մազլումյանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց խմբի անդամների Հայաստան այցի նպատակը, որով բարեկամ երկրի մտավորականությունն առիթ է ունենում մոտիկից ծանոթանալու հայ մշակույթին եւ ազգային-հոգեւոր արժեքներին:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրերին ներկայացրեց համայն հայության հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի խորհուրդը եւ պատմությունը: Անդրադառնալով Հայոց Եկեղեցու կարեւոր դերակատարությանը հայ ժողովրդի կյանքում՝ Վեհափառ Հայրապետը տեղեկացրեց, որ փորձություններով լեցուն հայոց պատմության ընթացքում Եկեղեցին ազգապահպան մեծ առաքելություն է իրականացրել՝ հաճախ ստանձնելով նաեւ ազգի քաղաքական առաջնորդությունը:

Նորին Սրբությունը ողջունեց այսպիսի փոխայցելությունների կազմակերպումը՝ նշելով, որ դրանք նպաստում են փոխճանաչողությանն ու հարաբերությունների առավել սերտացմանը: Դրանում Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարեւորեց Եգիպտոսի հայ համայնքի դերակատարությունը՝ գոհունակությամբ ընդգծելով, որ հայ ժողովրդի բազում զավակներ իբրեւ Եգիպտոսի լիարժեք եւ օրինակելի քաղաքացիներ իրենց խաղաղ կյանքով ու բարի ծառայությամբ նպաստում են երկրի զարգացմանն ու առաջընթացին:

Հանդիպման ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց նաեւ եգիպտացի մտավորականների հարցերին, որոնք վերաբերում էին կրոնական հանդուրժողականությանը, Հայ եւ Ղպտի եկեղեցիների եղբայրական հարաբերություններին, եգիպտահայ համայնքի վիճակին, Հայոց Եղեռնի 100-ամյա տարելիցին ընդառաջ Հայ Եկեղեցու կողմից կազմակերպվող աշխատանքներին, տարածաշրջանում առկա խնդիրների կարգավորման գործում Հայ Եկեղեցու կողմից գործադրվող ջանքերին, Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Եգիպտոսի մշակութային նախարարությունը Ս. Էջմիածնում